ՀԱԿՈԲ ԿՈՋՈՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶԱՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԹԵՄԱ՝

ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ, ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ

ՀԵՏԱԶՈՏՈՂ ՈՒՍՈՒՑԻՉ՝ ԿԱՐԻՆԵ ԳԱԼՍՏՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՌԱՖԱՅԵԼ ԻՇԽԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 153 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն 3

2. Առարկաների կիրառումը արվեստում, նատյուրմորտ 4

   2.1 Վերածնունդ 6

   2.2 Փոքր Հոլանդացիներ 7

   2.3 Իմպրեսիոնիզմ 8

   2.4 Կուբիզմ 11

   2.5 Սյուրռեալիզմ 14

   2.6 Հայկական նատյուրմորտ 15

3. Եզրակացություն և առաջարկություններ 18

4. Օգտագործված գրականություն 19

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Նատյուրմորտը կերպարվեստի ժանր է որտեղ պատկերվում են անշարժ, անշունչ առարկաներ:

նատյուրմորտը զարգացման տարբեր փուլերով է անցել: Նատյուրմորտը որպես ժանր սկզբնավորվել է եվրոպական արվեստի կազմավորման զուգընթաց, վերածննդի շրջանում նկարիչները արդեն ուշադրություն են դարձրել նյութական աշխարհի, իրերի կոնկրետ առարկաների, նրանց նյութականության և ձևի վրա:

Իմպրեսիոնիստները առաջ քաշեցին իրենց սեփական ընկալումը և պատկերացումը՝ նրանց գլխավոր նվաճումը տեխնիկայի փոփոխումն էր: Կուբիստները նույնպես իրենց ուրույն խոսքը ասեցին՝ նրանք հնարավորություն տվեցին պատկերը տեսնել եռաչափ:

Օրինակ ֆրանսիացի նկարիչ և պոստիմպրեսիոնիստ Պոլ Սեզանը նկարիչներին խորուրդ էր տալիս նայել բնությանը որպես պարզ ֆորմաների հանրագումար՝ գունդ, կոն և գլան:

Սալվադոր Դալիի մոտեցումը նատյուրմորտներին նոր հարթություն է ավելացնում դրանց իմաստի և վերլուծության մեջ, շատ անգամ նրա յուրովի ընկալումը անշարժ առարկաներին նրանց անսովոր շարժում է հաղորդում: Օրինակ իր «Հիշողության Հաստատակամությունը» սյուրռեալիստական գործը ներկայացնում է փափուկ հալվող գրպանի ժամացույցի պատկերը, դրանով նա ժամանակի գործոնն էր շահարկում անշարժ իրերին անսովոր շարժում տալու միջոցով: Սա ավելի մանրամասն վերլուծության առարկա է այս աշխատանքի հիմնական հատվածում:

Հետազոտության թեմայի արդիականությունը: Նատյուրմորտը ժամանակի ընթացքում ենթարկվել է բազմաթիվ փոփոխությունների և շարունակելու է իր զարգացման ուղին արտացոլելով ժամանակի պահանջները և խնդիրները: Նատյուրմորտը երեխաներին սովորեցնում է ծավալատարածական հասկացողություն, որը հիմք է հանդիսանում շրջակա միջավայրի առավել լիարժեք ընկալմանը և երևակայության զարգացմանը:

Հետազոտության նպատակը: Դիտարկել նատյուրմորտի, որպես կերպարվեստի ժանր, զարգացումը և առանձնացնել աչքի ընկնող արվեստագետների ստեղծագործությունները և նրանց դերը ժանրի զարգացման մեջ:

Հետազոտության խնդիրը:

- Հետազոտության խնդիրն է ներկայացնել նատյուրմորտի բազմավոճայնությունը, ինչպես նաև առարկաների կիրառման անսահմանափակ հնարավորությունները:

2. ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԱՐՎԵՍՏՈՒՄ, ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ

Գեղանկարչությունը դա արվեստի այնպիսի տեսակ է, որտեղ ներկա է բնությունը: Նկարիչը ստեղծագործելիս հաշվի է առնում իրական բնությունը և աշխատում է վերարտադրել այն: Նկարիչը իր ստեղծագործություններում վեր է հանում ժամանակի խնդիրները, սոցիալական վիճակը, էսթեթիկական արժեքները: Որոշ աշխատանքներ իրենցից պատմական արժեք են ներկայացնում: Այդ նկարների միջոցով մենք լիարժեք տեղեկություն ենք ստանում տվյալ ժամանակաշրջանի մասին:

Գծի և գույնի միջոցով նկարիչը բացահայտում է շրջապատի գեղեցկությունը, գունագեղությունը և ծավալային խորությունը: Գեղանկարչի հիմնական արտահայտչամիջոցը հանդիսանում է գույնը: Գույնը իր հյութեղությամբ, էքսպրեսիայով ուժեղացնում է ստեղծագործության էմոցիոնալությունը:

Նկարիչը իրական աշխարհը պատկերում է գույնի միջոցով: Մեկ գույն և մի քանի տոներով նկարիչը ստեղծում է մոնոխրոմ նկար, իսկ իրար հետ փոխկապակցված գույներով և տոնով գունեղ գամմա է ստեղծում:

Պատկերելով առարկաները նկարիչը պատկերը դնում է տարածության մեջ, օգտագործում է լույս և ստվեր, ավելի մեծ արտահայտչականության հասնելու համար օգտագործում է ռեֆլեքսներ, ստեղծում է հետաքրքիր գունային կոլորիտ: Գեղանկարչական ընդհանուր տոնը հնարավորություն է տալիս պատկերել առարկաները շրջապատի հետ միասնական կապի մեջ: Գեղանկարչական արտահայտամիջոցներից է վրձնահարվածի ձևը, ծավալայնությունը: Գեղանկարիչը օգտվելով լույսի տաք գույներից, և ստվերի սառը գուլյներից, պատկերվող առարկային տալիս է ծավալայնություն, տարածականություն:

Գեղանկարչությունը կարող է լինել 1 շերտ (алла прима) և մի քանի շերտանի (պադմալյովկա և լիսիռովկա): Ստեղծագործելիս նկարիչը ընտրում է իրեն հոգեհարազատ միջավայր, նույնը նա անում է նատյուրմորտ նկարելիս, ընտրում է իրեն հոգեհարազատ առարկաներ: Արվեստի տարբեր ուղղություններին պատկանող նկարիչները առանձնանում են իրենց մտածելակերպով և դրանով իսկ տարբերվում են նաև նրանց ստեղծագործությունները: Նկարիչը իր ասելիքը հասցնում է դիտողին, ընտրելով իրեն հարազատ առարկաներ և պատկերում է իրեն հոգեհարազատ գունային գամմայով: Դեկորատիվ առարկաներով պատկերված աշխատանքը կոչվում է նատյուրմորտ:

Նատյուրմորտը դա գեղանկարչական ժանր է, որտեղ գլխավորը առարկաներն են: Դա կարող է լինել տարբեր առարկաներ, մրգեր, ծաղիկներ, նույնիսկ կենդանիներ:

Նատյուրմորտը ֆրանսերենից թարգմանված նշանակում է մեռած բնություն (nature morte), իսկ հոլանդերենից (stilleven): Հայտնի է նաև անգլիական թարգմանությունը still life անշարժ կյանք: Կա մտածելակերպ, որ գեղանկարչական ներաշխարհը ավելի շատ արըահայըվում է նատուրյմորտի և բնանկարի մեջ:

Գեղանկարիչը ստիպում է դիտողին հիանալ այն սովորական առարկաներով, որոնք գոյություն ունեն կենղացում, ոնրոց վրա սովորական մարդը իր առօրյայում նույնիսկ չի նկատում:

2.1 ՎԵՐԱԾՆՈՒՆԴ

Նատյուրմորտը որպես գեղանկարչական ժանր ձևավորվել է միայն XVII-րդ դարում, բայց մինչ այդ պահպանվել են պատերի վրա արված աշխատանքներ: Հին եգիպտական տաճարներում հանդիպում ենք պատկերված տարբեր առարկաներ: Մեզ հասած անտիկ վարպետների կողմից տրված խճանկարներում և որմնանկարներում հանդիպում ենք տարբեր պատկերներ, որոնք արված են մանրակրկիտ և պարզ: Հին Հունական և Հռոմեական վարպետների կողմից արված աշխատանքները կատարված են մեծ վարպետությամբ: Պալատներում և տանը գոյություն ունեին հատուկ տարածքներ, որտեղ պատկերում էին մարգեր, ծաղիկներ, կենդանիներ:

Վերածննդի ժամանակաշրջանում նկարիչները իրենց հայացքը ուղղեցին շրջապատի վրա: Մեծ չափերի աշխատանքներում իր փոքրիկ տեղ զբաղեցրեց նատյուրմորտը, ապակե բաժակ, արծաթե սափոր, սպիտակ լիլիաներ. հաճախ պատկերում էին նկարի մի անկյունում:

Նատյուրմորտը արվեստի լիարժեք ժանր դարձավ միայն XVII-րդ դարում: Նատյուրմորտը անդրադառնոլով սովորական կենցաղային իրերին, հաստատեց նրա էսթետիկական արժեքը:

2.2 ՓՈՔՐ ՀՈԼԱՆԴԱՑԻՆԵՐ

Հոլանդացիները իրենց համոզեցին, որ հասարակ առարկաները ունեն նշանակություն և գեղեցկություն: Նկարիչները ստիպեցին հասարակ առարկաներին այլ կերպ նայել. նրանց մեջ տեսնել գեղեցկություն և միտք: Այն ամենը ինչ նկարիչը աշխատել էր վերարտադրել իր աշխատանքում: Դարեր շարունակ նկարիչները իրենց շուրջը գտնվող առարկաների միջոցով ցանկացել են դիտողին հաղորդել իրենց միտքը և հետաքրքրությունները: Ամեն ստեղծագործող իր միտքը ցանկանում էր հասցնել դիտողին իր յուրօրինակ մոտեցմամբ: Աշխարհի ընկալումը բոլոր ստեղծագործողների մոտ տարբեր էր:

Այդ շրջանում նատյուրմորտը իր արտահայտությունը գտավ Նիդեռլանդական արվեստում: Իրենց մեծ ներդրումը կատարեցին «փոքր Հոլանդացիները» (Պիտեր Կլաս, Վիլեմ Կլաս, Յան Վան Խեյսում և այլն): Վիլլեմ Վան Աստը իր թռչուններ և որսորդական պարագաներ աշխատանքում պատկերել է այն ամենը, ինչ հատուկ է որսորդությանը: Այս շրջանում հոլանդական արվեստում գոյություն ուներ մեծ մրցակցություն: Նկարիչները աշխատում էին պատկերել առարկաները մեծ վարպետությամբ: Պատկերում էին կենցաղային առարկաներ, ծաղիկներ, թռչուններ, որսորդական պարագաներ, մրգեր:

ՆԿԱՐ 1. Վիլեմ վան Ալելստ, «Խաղ որսորդական սարքավորումներով խորշում»

2.3 ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ

Նատյուրմորտի ժանրը իր արտահայտումը գտավ արվեստի տարբեր ուղղություններում՝ իմպրեսիոնիզմ, կուբիզմ, սյուրռեալիզմ, ֆովիզմ:

Իմպրեսիոնիստները առաջ քաշեցին աշխարհի իրենց սեփական ընկալումները և պատկերումը: Իմպրեսիոնիստների գլխավոր նվաճումը եղավ, գեղանկարչական տեխնիկայի փոփոխումը: Նրանք անդրադարձան բնությանը, հասարակ մարդուն, կենցաղային սովորական առարկաներին:

Աշխատելով պատկերել առարկաները իրենց սուբյեկտիվ տպավորությամբ: Նկարիչները հեռացան ակադեմիական մոտեցումներից և ստեղծեցին գեղանկարչական նոր մեթոդներ: Իմպրեսիոնիստները հանդես եկան կլասիցիզմի, ռոմանտիզմի, ակադեմիական ուղղությունների դեմ, նրանք իրենց ստեղծագործություններում փորձում էին պատկերել պահի տպավորությունը, լույսը, օդը: Իմպրեսիոնիստները փորձում էին մաքսիմալ ճշգրտությամբ արտահայտել առարկաների վիճակը, պահի տպավորությունը: Պատկերել լույսի տաք խաղերը և ստվերի սառը գույները առարկաների վրա: Այդ մոտեցումները իրենց արտահայտությունը գտան Գյուստավ Կուռբեի ստեղծագործություններում: Անմիջական բնության հետ շփումը, աշխատանքներին տվեցին նոր կյանք, խորություն և հյութեղություն: Մանեն փորձում էր հասկանալ ժամանակակից կյանքի գեղեցկությունը: Նա փորձում էր իր սեփական ընկալումը բնությունից հասցնել դիտողին: Մանեն պարզեցրեց կոմպոզիցիան պատկերելով քիչ առարկաներ: Նրա մոտ չենք տեսնի գեր հագեցաց աշխատանքներ, ինչպես դա անում էին իրենից առաջ նկարիչները: Այլ աշխատում էր պատկերել մի քանի պարզ առարկաներ, որոնք կատարված էին մեծ վարպետությամբ և փայլով: Դա տեսնում ենք 1863 թ. արված «Ընթրիք խոտի վրա» աշխատանքում: Այս աշխատանքը ցուցադրվեց մերժվածների սալոնում, որտեղ մեծ ծաղրի արժանացավ: Առաջին պլանում արևի շողերի տակ պատկերված է նուրբ և գեղեցիկ նատյուրմորտ: Մանեն մեծ վարպետությամբ է լուծել լուային խնդիրները, որոնք ընկած են տարբեր առարկաների վրա: Խոտի վրա ընկած հագուստը, գլխարկը, մրգերը կատարված են մեծ վարպետությամբ, թեթևությամբ և շքեղությամբ: Մարդկանց շարժումների մեջ իհարկե նկատվում է թատերայնություն: Հետագայում Մանեն հասավ ավելի մեծ վարպետության: Մահվանից 2 տարի առաջ նա նկարեց «Բառ Ֆոլի Բերժեր» աշխատանքը: Աշխատանքը կատարված է մեծ վարպետությամբ: Նկարում պատկերացված է աղջիկ (վաճառողուհին), որի առջև դրված են շշեր, մրգեր: Աղջիկը պատկերված է մտածկոտ և թախծոտ, իսկ շրջապատի առարկաները պատկերված են ամբողջ փայլով: Ամբողջ դահլիճը ողողված է լույսով և

փայլով: Մանեն գեղեցիկ է պատկերել լամպերը, որից լույսը տարածվում է ամենուր: Թափանցիկ սկուտեղների մեջ պատկերված են ոսկեգույն մրգեր: «Յասամանի փունջ» աշխատանքը կատարված է մեծ վարպետությամբ, աշխատանքը լակոնիկ է և ավելորդ ոչինչ չկա: Նկարիչը պատկերել է մի փունջ յասաման և նրա վրա ընկած լույսը: Լույսի անմիջական պատկերումը մինչ այդ չկար նկարիչների ստեղծագործություններում, Մանեն նկարի մեջ մտցրեց լույսը: Այդ ուղղությունը շարունակեցին մյուս իմպրեսիոնիստները: Նոր մեթոդը հաստատեց գեղանկարչության մեջ նոր մոտեցումներ և նոր լուծումներ:

Արվեստում իր ուրույն տեղն է զբաղեցնում Սեզանը: Նա նոր ժանրի հետևորդներից էր: Նրա ստեղծագործություններում մեծ տեղ էր զբաղեցնում նատյուրմորտը:

Սեզանի յուրաքանչյուր ճիշտ կատարված աշխատանք դառնում է երաժշտություն, լի լույսով և գեղեցկությամբ: Սեզանի նատյուրմորտները կատարված են մեծ վարպետությամբ: Նա պատկերել է հյութեղ, գունեղ, ախորժաբեր մրգեր սպիտակ սփռոցի վրա: Երբ համեմատության մեջ ենք դնում Սեզանի աշխատանքները, զգում ենք նրա աշխատանքի գեղեցկությունը և հյութեղությունը:

ԱՌԱՐԿԱՆԵՐԸ ՎԻՆՍԵՆԹ ՎԱՆ ԳՈԳԻ ԱՐՎԵՍՏՈՒՄ

Վինսենթ Վան Գոգի անունը միշտ կապված է եղել ծաղիկների հետ: Նա ինքը գրել է իր եղբայր Տեոին ուղված նամակներից մեկում. “Արևածաղիկները դա իմն է:” Այդ ծաղիկը հատուկ տեղ է զբաղեցնում նրա արվեստում: Դեղին գույնը համարվում է ընկերության և հույսի գույն: 1888 թվականին Վինսենթ վան Գոգը նկարել է իր ամենա հայտնի արևածաղիկներից մեկը: Նա որոշել էր այդ աշխատանքով ձևավորել արվեստանոցը, հետո որոշեց այս աշխատանքով գեղեցկացնել սենյակը որը հատկացված էր Պոլ Գոգենին: Վան Գոգի արևածաղիկները կատարված են մեծ վարպետությամբ: Զարմացնում է այն զգացմունքայնությունը որը նկարիչը դրել է ամենա պարզ առարկաների մեջ, օրինակ հասարակ աթոռ պատկերելու մեջ: «Վինսենթի ծխամուրճը աթոռին» աշխատանքը զարմացնում է իր պարզությամբ, այդ նույն պարզությամբ նա նաև պատկերել է իր մահճակալը ու բազմաթիվ այլ իրեր որոնք շրջապատում էին նրան առօրյա կյանքում: Վինսենթ Վան Գոգը նկարել է բազմաթիվ նատյուրմորտներ, որոնք կատարված էին գեղեցիկ վրձնահարվածներով ինչպես նաև իրեն բնորոշ յուրահատուկ գունային համադրություններով: Նա իր գույների և վրձնահարվածների միջոցով մեզ փոխանցում է ոչ միայն առարկաների արտաքին հատկությունները այլև փոխանցում է դրանց հուզական արժեքները արտահայտելով առարկայի և նկարչի միջև եղած եմոցիոնալ կապը: Որոշ

առարկաներ առտահայում են միայնություն, իսկ որոշները, օրինակ Արևածաղիկները, կյանքի խորհրդանիշ են հանդիսանում: Իսկ մի ուրիշ աշխատանք՝ «Իրիսները» բացահայտում է նկարչի բարդ հոգեբանական կերպարը: Այստեղ ծաղիկները իրար հետ միահյուսված ձգտում են դեպի արևը, իսկ դրանց կանաչ ցողունները մխրճված են հողի մեջ որը պատկերված է տաք, կարմիր և դարչնագույն գույներով:



ՆԿԱՐ 2. Վան Գոգ, Վինսենթ «Իրիսներ»

ՆԿԱՐ 3. Վան Գոգ, Վինսենթ «Արևածաղիկներ»

2.4 ԿՈՒԲԻԶՄ

Սեզանը արվեստի մեջ բացեց նոր հորիզաններ, այդպես է գրել Սեզանի մասին 1888թ. Փարիզյան թղթակիցներից: Սեզանը խորհուրդ էր տալիս երիտասարդ նկարիչներին նայել բնությանը որպես պարզ ֆորմաների հանրագումար: Գունդ, կոն և գլան: Նա նկատի ուներ, որ այս հիմքային ֆորմաները պետք է լինեն ցանկացած նկարի հիմքում: Սակայն, Պիկասոն և նրա ընկերները ընդունեցին այս խորհուրդը բառացիորեն:

Կուբիզմի ծնունդը իմպրեսիոնիզմի և հետիմպրեսիոնիզմի վերլուծական տենդենցների բնական հետևանք էր: Կուբիստները իրենց ուրույն խոսքը ասեցին այդ ժանրում: Կուբիստները հնարավորություն տվեցին դիտողին աշխարհը տեսնել եռաչափ: Նրանք նոր հնարավորություններ բացեցին արվեստում, նոր գույների հնարավորություններ բացվեցին: Կուբիստները պատկերում էին ոչ այն, ինչ որ տեսնում էին, այլ ինչպես զգում էին: Պիկասոն ասում էր. «Ես նկարում եմ նման բնորդին և ոչ բնորդին»:

Կուբիզմի փայլուն ներկայացուցիչներից են Պաբլո Պիկասոն և Ժորժ Բռակը: Պիկասոի այս ժանրում արված աշխատանքներից է «Ավինյոնի աղջիկները» աշխատանքը, որը մեծ աղմուկ բարձրացրեց: Այս աշխատանքը կուբիստական ժանրի փայլուն աշխատանքներից է հանդիսանում: Պիկասոն պատկերել է 5 կանանց, իսկ առաջին պլանում պատկերել է մրգեր:

Կուբիզմի մյուս բնորոշ գիծը դարձավ գեղեցկության նոր հասկացության ստեղծումը. «Չկա ավելի անհուսալի բան, քան գեղեցկության հետ համընթաց քայլելը կամ նրանից հետ ընկնելը»:

Որոշ ժամանակ անց ի հայտ են գալիս նոր էսթետիկ ընկալմամբ, տարբերվող ֆորմաներով կուբիստական ստեղծագործություններ: Նկարիչները սկսում են արվեստ ներմուծել իրական առարկաներ՝ տուփեր, երաժշտական գործիքներ, տարբեր նյութեր՝ թուղթ, ծառ, կտոր: Եթե սեզանական կուբիզմում կարևորը տարբեր տարիների նույն նյութից լինելն ընդգծելն էր, ապա այժմ՝ նկարի տարբեր նյութերից բաղկացած լինելը: Սա կտավը մասամբ դարձնում էր դեկորատիվ: Նման ստեղծագործությունները դասվում են սինթետիկ կուբիզմի շարքին, կուբիզմի որոշ ֆորմաներ բերում են անառարկայնության, ֆորմաները անհայտանում են:

Այս ժանրում իր ուրույն տեղն ունի Ժորժ Բռակը: Բռակը իր կուբիստական ուղին սկսել է Պիկասոյի հետ: Նրանց աշխատանքներում հանդիպում ենք նման աշխատանքներ, որոնք իրարից շատ քիչ տարբերություն ունեն: Ժորժ Բռակը ունի նատյուրմորտներ, որոնք կատարված են ժանրի ամբողջ գեղեցկությամբ:

ՆԿԱՐ 4. Սեզան, Պոլ - Նատյուրմորտ վարագույրով

ՆԿԱՐ 5. Պիկասո, Պաբլո - Նատյուրմորտ պանիրով

ՆԿԱՐ 6. Բրաք, Ժորժ «Կլոր սեղան», 1929

2.5 ՍՅՈՒՐՌԵԱԼԻԶՄ

Հայտնի իսպանական նկարիչ Սալվադոր Դալիին հաճախ անվանում են “հանելուկային” միստիկ, ֆանտաստիկ, խորհրդավոր: Դալիի կյանքը և ստեղծագործությունը մարտահրավեր էր մարդկությանը: “Հանելուկային” և սկանդալային, այս երկու բառերով կարելի է արտահայտվել Դալիի ստեղծագործությունների մասին: Նրա կյանքը և ստեղծագործությունները հանելուկային են մարդկության համար, Դալին ինքը ստեղծեց իր կյանքը և ստեղծագործությունները: Ինչպես երազները մեկնաբանության կարիք ունեն, այնպես էլ Դալիի ստեղծագործությունները: Նա մեր դարի ամենա պայծառ և առտահայտիչ մոդերնիստներից մեկն է: Դալին իր ստեղծագործություններում պատկերել է տարբեր առարկաներ, ժամացույց, ձու, դանակ, բաժակ, նավ և այլն: Դալին իր մասին ասում է որ իր ընկերները և հասարակությունը պնդում են, որ չեն հասկանում իմ աշխատանքները և դրանցում պատկերված կերպարները, որոնք ծնվում են իմ գլխում և ես հանձնում եմ այն կտավին: Ի՞նչպես կարող են հասկանալ , երբ ես ինքս այդ կերպարները ստեղծողս չեմ հասկանում: Բայց դա չի նշանակում, որ դրանց մեջ բացակայում է իմաստը, հակառակը դրանց մեջ միտքը շատ խորն է: Իմ աշխատանքները հասկանալու համար, շարունակում է, նա անհրաժեշտ է դրանք ենթարկել խորը վերլուծության:

Դալիի ամենա հայտնի աշխատանքներից մեկն է «Հիշողության հաստատակամությունը»: Նկարիչը պատմելով նկարի ստեղծման մասին, չի տվել բանալիները նկարը հասկանալու համար: Այս աշխատանքի պատմությաւնը այսպիսին էր՝ մի անգամ երբ Դալին ճաշակում էր Կամաբեր պանիրը, այն նրան բերեց այն մտքի, որ մատերիան կարող է լինել փափուկ: Քնելուց առաջ Դալին նորից նայեց իր նոր կատարված աշխատանքին, դա դատարկ մի բնանկար էր, նա այդ բնանկարը կենդանացրեց: Նրա աչքի առաջ հայտնվեց մի հալչող ժամացույց և երկու ժամ հետո աշխատանքը ավարտված էր:

Այս աշխատանքը շատ տարբեր ձևերով է մեկնաբանվում: Ոմանք համարում են որ այդ աշխատանքում պատկերված է բնության անհուսալիությունը ժամանակի ընթացքում: Այլ տարբերակներ էլ կան, բայց կարևորը այն է որ նկարիչը հասել է իր գլխավոր նպատակին, այսինքն կարողացել է ստեղծել անմոռանալի աշխատանք, որը հանդիսանում է սյուրռեալիզմի դասական աշխատանքներից մեկը:

2.6 ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱՏՅՈՒՐՄՈՐՏ

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում տեղի են ունենում փոփոխություններ արվեստում: Հայկական արվեստի վրա իրենց ազդեցությունը ունեցան սիմվոլիզմը, իմպրեսիոնիզմը և պուանտիլիզմը:

Հայկական արվեստում իր ուրույն տեղը զբաղեցրեց նատյուրմորտը: Հայկական արվեստում կարող ենք առանձնացնել Սարյանի ստեղծագործությունները: Սարյանը իր կտավներում ձգտում է հասնել գույնի մաքրության և հնչեղության: Սարյանի ստեղծագործությունները լի են լույսով և գույնով:

«Հայաստանի լույսը մեզ է հասնում Մարտիրոս Սարյանի շնորհիվ, պայծառ լույսը լուսավորում է մարդկանց, լեռները, պտուղները – այն գանձ է կրկին հայտնաբերված... Նրա գույներն այնքան գեղեցիկ են, որ մեր Մատիսի և Սեզանի կողքին դարաշրջանը պիտի առաջնակարգ տեղ հատկացնի Մարտիրոս Սարյանի համար...» – այսպես է արտահայտվել բանաստեղծ Լուի Արագոնը:

Իսկ Սարյանը գրել է՝ «Արվեստը երգիչն է կյանքի, նկարչի պարտքն է քարոզել սեր բնության, մարդու և աշխատանքի հանդեպ»:

Սարյանի նկարները խոսում են տաք լռությամբ... խոսում են բնության և աշխարհին տեսանելի լեզվով: Մարտիրոս Սարյանի ստեղծագործություններում ամբողջ Հայաստանն է իր բազմագույն գեղեցկությամբ: Նա նկարել է հայկական գեղեցիկ և բազմագույն դաշտային ծաղիկները, մրգերը: «Երևանյան ծաղիկներ»:

Հայ գեղանկարչության մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում Մինաս Ավետիսյանը: Նա ունի բազմաթիվ աշխատանքներ կատարված նատյուրմորտի ժանրում:

Մինասի ստեղծագործությունները յուրահատուկ են իրենց գունային ուժեղ հակադրություններով: Նատյուրմորտի ժանրում կատարված աշխատանքներից կառանձնացնեի «Ձմերուկ նատյուրմորտը», որը անձամբ ինձ վրա մեծ տպավորություն է գործել: Գունային կոլորիտը, տաք ու սառը գույների համադրությունը հրաշալի է վերցված այս աշխատանքում. գեղեզիկ կապույտի և կարմիրի համադրությունը

Շատ հայ նկարիչներ նույնպես անդրադարձել են այս ժանրին, բայց ես առանձնացրել եմ այն աշխատանքները, որոնք ինձ վրա մեծ ներգործություն են ունեցել: Ես իմ աշխատանքներում նույնպես ցանկանում եմ հասնել նման վարպետության: Այս ժանրում ինքս ունեմ բազմաթիվ աշխատանքներ: Մրգերով, ծաղիկներով արված նատյուրմորտներ:

Ես իմ աշխատանքներից կարող եմ առանձնացնել «Դեղձերով նատյուրմորտ» և «Կալաներով նատյուրմորտ»:

Իմ աշակերտներին ցանկանում եմ հաղորդել այն գիտելիքները, որը ես հավաքել եմ տարիների աշխատանքից հետո: Նկարչի մասին խոսում է նկարչի ստեղծագործությունը:

ՆԿԱՐ 7. Սարյան, Մարտիրոս «Պարսկական նատյուրմորտ», 1913

ՆԿԱՐ 8. Ավետիսյան, Մինաս «Նատյուրմորտ. Ձմերուկ», 1913

ՆԿԱՐ 9. Գալստյան, Կարինե «Նատյուրմորտ», 201

3. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐ

Ուսումնասիրելով գեղարվեստի պատմության մեջ զգալի դեր և նշանակություն ունեցող նատյուրմորտ ժանրի ընթացքը կարելի է առանցնացնել ժանրի ճկունությունը, որը հնարավորություն է տալիս այն լայնորեն կիրառել դասապրոցեսում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ `

- Նատյորմորտը և այդ ժանրի մեջ կիրառվող առարկաների տեսակը բազմազան է: Յուրաքանչյուր նկարիչ ունի ժանրի իր յուրահատուկ մեկնաբանումը:
- Գունային լուծումները և տեխնիկան միջոցները ստեղծագործողին հնարավորություն են տալիս մեկնաբանելու և վերլուծելու իր կատարած աշխատանքը և հասնել դիդորդի համար տեսանելի արձյունքի: Արվեստի պատմության մեջ տարբեր նկարիչների կողմից պատկերված նույնատեսակ առարկաները, կատարված տարբեր մոտեցումներով, կարող են պարունակել ոչ միայն ֆիզիկական հատկությունները այլ փոխանցել ինֆորմացիա և ունենալնաև հուզական և էմոցիոնալ ազդեցություն.
- Մարդկության զարգացման ընթացքի հետ փոխվում են պատկերման ոճը և առարկաների տեսակը, արտացոլելով տեխնոլոգիական զարգացումը և ապրելաոճը:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆԵՐ՝

- Լայնացնել դասապրոցեսում կիրարվող առարկաների քանակը և տեսակը, երեխաներին տալով ընտրություն:
- Երեխաներին տալ հնարավորություն ծանոթանալու տարբեր առարկաների պատկերման ձևի, ծավալի, գույնի և այլ հատկությունների հետ:
- Առաջարկելով բազմատեսակ առարկաներ, աշակերտներին հնարավորություն տալ մտածել և ստեղծել իրենց ստեղծագործական աշխատանքը հաշվի առնելով կոմպոզիցիոն կառուցվացքը, դրա գույնային և ոճային լուծումները:
- Առաջարկել աշակերտներին նկարել նույն նատյուրմորտը միքանի նակրչական ուղղություններով՝ սյուռեալիստական, իմպրեսիոնիստական, կուբիստական և այլն: Տալով հնարավորություն ամրապնդել աշակերտների գիտելիքները սեփական փորձով:

4. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լիլի Տեր-յան «Մարտիրոս Սարյան». https://lili-mardastco.blogspot.com/2011/07/blog-post_2291.html

2. Վիքիպեդիա ազատ հանրագիտարանից «Մինաս Ավետիսյան». https://hy.wikipedia.org/wiki/Մինաս_Ավետիսյան

3. Ե. Վ. Զավադսկայա «Սալվադոր Դալի. 20-րդ դար. նկարիչը և աշխարհը»; «Գեղանկարչական արվեստ» Մոսկվա 1992

4. «Պատկերասրահ» ամսագիր; 2004 De Agostini UK Ltd.